ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 ,
norik.melkonyan@mail.ru

N 38
20 ապրիլ 2021թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլին կայացրած թիվ 12-Ա-15-Ա որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան
Հեռ.՝ 098-29-30-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2021 թվականի N 12-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

որոշում եմ

1. 2021 թվականի ապրիլի 15-ին ժամը 11^{00}-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.
Ողջաբերդ համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի հաղորդման մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ

2021 թ. ապրիլ 14

գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 13-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04-Ի N 18-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով, Ողջաբերդ համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության,աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման,արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով՝

որոշում եմ

1. Հաստատել Ողջաբերդ համայնքի.
1) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:
2.Ուժը կորցրած ճանաչել Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 04-ի <<Ողջաբերդ համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման և համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 30-ի N 18-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 18-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ**

2021թ. ապրիլ 15
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 14-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 17-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակատերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով, Ողջաբերդ համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

որոշում եմ՝

1. Հաստատել 2021 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Ուժը կորցրած ճանաչել Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 30-ի <<Ողջաբերդ համայնքում աղետների ռիսկի կառավարման պլանը հաստատելու և Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 26-ի թիվ 16-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 17-Ա որոշումը:
4.Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ**

2021 թ. ապրիլ 15
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 15-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ,ՍԵԼԱՎՆԵՐԻ,ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով,հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 31-ի N 92-Ա որոշումը՝

որոշում եմ

1, Հաստատել Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝համաձայն N 1 հավելվածի:
2. Մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել.
1) համապատասխան միջոցառումների պլան՝ համաձայն N 1 հավելվածի,
2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝համաձայն N 2 հավելվածի,
3) առաջարկություններ՝համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝համաձայն N 3 հավելվածի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել առաջատար մասնագետ-հաշվապահ Հայկանուշ Բաբայանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2021թ. ապրիլ 15
գ.Ողջաբերդ